ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԳԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիոյ և Ռուսիոյ համար տարեկան 23 Ֆրանգ
Ուրիշ ամեն տեղերի » » 20 »
Տնօրինութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոեւէ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէն յետոյ, ժամ 2էն մինչեւ 4 միայն։

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 64

1886 ՄԱՐՏ 27

(ՄԱՐՏ 15 Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Կը հրատարակուի Երկ. և Շրթ. օրերը

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կաժէ։ 1 դժապիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով։ M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր երիտասարդութիւնը եւ նրանց դէպի Հայաստան ունեցելիք պարտաւորութիւնները. — Շնորհաւորական նամակ Կ. Պոլսի Հայերէն առ Գ. Կիւտցսքցի.— Նամակ Պարսկաստանէն (Նոր Ջուղա).— Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն (Աբլպօրօ).—Աղաւնուր Գ. Աղաւնուր. —Էջմիածնի եւ Կիլիկիայի կաթողիկոսական յարաբերութիւններ. —Մահագոյժ.— Ֆրանսական յուրեր.—Տեղական.—Արեւելեան խնդիր. — Արտասահմանի լուրեր. —Ծանուցումներ:

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՑԱԼԻՔ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

..... Բայց մի՞թէ հայ երիտասարդութիւնը ինքը չի զգում իւր պարտաւորութիւնները, որոնց մասին համարձակվում եմ հրաւիրել նրա ուշադրութիւնը։ Մի՞թէ ես նրան վերաւորած չեմ լինիլ, երբ յիշում եմ այնպիսի մի նուիրական պարտականութեան մասին, որը ամեն [illegible] մի աղնիւ մարդու կեանքի նպատակը պէտք է լինի .... Սիրելի ընթերցող, ի՞նչ ես կարծում, եթէ մեր երիտասարդութիւնը ծուլութեամբ և անտարբերութեամբ չի վերաբերուել դէպի իւր անբաղդ հայրենիքի պահանջները, եթէ նա մինչև այժմ հայրենիքի անպարտաճանաչ զաւակի դերը չի կատարել, մի՞թէ այսօր Հայաստանը մեր աչքերի առաջ կը նմանուէր արտասուքի և սիրտ կըտրատող արտմութեան մի ընդարձակ հովտի միայն։

Այո, հայ երիտասարդնե՛ր, ինչքան էլ որ անհաւատալի չը լինի իմ ձեր վերաբերութեամբ արտայայտած մտքերիս լսելը, ասկայն ցաւը ներանում է, որ դուք ձեր գործերովը ապել վարձատրութեան չէք արժանի։ Ցաւահար լինելով, որ աղնիւ և անաչառ ընթերցողը ևս իմ միտքն է պնդելու, այն է, որ դուք ձեր կոչումին անարժան մարդիկ էք, այժմ թոյլ լինէ ներելի լինի այստեղ մէկ հարցառութիւն անել։ Մեր հին սերունդը հայ ժողովրդի բարեկեցութեան համար ի՞նչ է արել մինչև այժմ, և ի՞նչ է անում ներկայումս նոր սերունդը։ Հին սերունդի մասին այս գրութեան մէջ թէև յանկութիւն չունեմ խօսելու, բայց որ մի անգամ վերևը դրած հարցս ևս նոր սերունդին ուղղեմ, ստիպուած եմ, որովհետև ես էլ այդ սերունդի մի անդամն եմ։ Ուրեմն, ես ինքս ինձ հարցնում եմ, թէ ի՞նչ է անում, կամ ո՞ւմ օգտին է ծառայում։

Դուք, կարելի է ասուել, որ այս տեսակ վերաբերութեամբ մի քանի ինքնասէր և երիտասարդի կոչում կրող անձնաւորութիւններ անտանելի և անհերեայի դատնեն, ուստի և ինձ վերայ բղաւելով հարցնեն. «Երևի ա՛յ, դուք բոլորովին լրագիրներ չէք կարդում, որ յանդգնում էք այդ տեսակ բաներ ասել մեր վերաբերութեամբ։ Մի՞թէ չէք տեսնում եւրոպական լրագիրների մէջ, թէ այս ինչ քաղաքի հայ երիտասարդութիւնը պատգամաւորութիւն էր ուղարկել Ֆրանսիայի մինիստրի մօտ հայկական խնդրի դործադրութեան համար ա՞ղերսելու։ Մի՞թէ ձեզ յայտնի չէ, որ նոյն հայկական գործի համար, կրկին հայ երիտասարդութիւնը, ի քանի [illegible] հանդիսաներ էլ Անգլիայի կառավարութեան է ներկայացրել։ Գարան, ուրիշ սրա նման օրինակներ էլի կան, որոնց մէկ մէկ յիշելը երկար կը քաշէր, բայց միայն խնայելու, որ այս բոլոր [illegible] ասուածները միանգամ և չատ լաւ են եղել։—«բարեացաջող դիպուածի են սպասում, որ մեր հայրենակիցների ցաւերին մի դարման անեն» Գարան, որանից էլ ուրախալի պատասխան ե՞ս ուզում Ուրեմն, Գ., մեզ մնում է աւելացնել, որ դուք չարաչար սխալվում էք, երբ ասում էք թէ մենք ոչինչ չենք անում»։

Դիւրահաւատ և անցեալը չատ մոռացող խեղճե՛ր Դուք կարծում էք, թէ հայ հասարակութիւնը Եւրոպայի բերանից այդ տեսակ դատարկ խոսմունքները առաջին անգամն է լսում Չէ, եղբայրնե՛ր, այդ և դրա նման խոսամունքները, որանից չորս տարի առաջ, նոյն ձեր յիշած Անգլիայի քանիցը, չատ է լսել հայ հասարակութիւնը. բայց ո՞ւր է գործադրութիւնը այդ խարտեաշ խոսամունքների ետևից միչտ անիրագործելի են մնացել Մի՞թէ այս 19 դ. դարում, այն էլ հայ երիտասարդութեան համար, անկի չի, որ հրաշքի է սպասում.... Մի՞թէ տեսել կամ ա՞լ է լսել, որ մի ազգ ազատուէր առանց արիւն թափելու, առանց կորուստներ տեսնելու Այս, շատ ամօթ է կարծել թէ մենք մեր տեղը հանգիստ նըստած, եթէ վազը ոչ, միւս օրը եւրոպան իւր խոսամունքները կը կատարի և Հայերի լաց ու կոծն էլ կը դադարի։

Սիրելի եղբայրնե՛ր, եկէք համոզուե՛նք, եւրոպայի մեզ տուած յոյսերի միտքը, եթէ ճշմարիտ էլ են, մենք այնպէս չենք հասկանում, ինչպէս եւրոպան է, դուք, հասկանում եթէ եւրոպան այս խոսամունքովը ուզում է մեզ տալ որնախ մեզ հարկաւոր է ցոյց տալ ուրիշներին, թէ այն պահանջի համար, որին ձգտելու մէջ մեզ օգնելու է եւրոպան, հայ հասարակութեան իրաւացի պահանջն է և ոչ թէ եւրոպայի լոկ ցանկութիւնը։ Եւ ճշմարիտ, եւրոպան իւր ցաւերը թողած, լաւ չի գնալ ազատելու մի այնպիսի ժողովրդի, որի հոգևոր դէմքը յայտարարում է, թէ հայ հասարակութիւնը կարօտութիւն չունի եւրոպայի օգնութեանը, թէ նա իւր վիճակից չատ գոհ է և այլն ....։

Մի կողմ դնելով եւրոպայի վերաբերութեամբ այս տեսակ գիտօտեղները անելը, վերջապէս մեզ ժամանակ է խոստովանուել, թէ այն հասարակութիւնը, որի աչքերից այժմ արտասուքի տեղ արիւն է հոսում և որի կարօտութեան չափերը եւրոպայ ահմանիչն էլ են անցել, էլի մենք ինքներս կարող կը լինենք, և պէտք է, այդ թշուառ ժողովրդի հետ միացած կատար ածել նրա բաղմադարեան պահանջները և հետևապէս դարման տանել նրա ցաւերին, քան թէ իւր խոսամունքը միչտ անօրոշ ապագայի համար եւրոպան։

Հայ երիտասարդնե՛ր, իմացէք, որ ամեն մի պատասխանատու և աղնիւ մարդու առաքելութիւն պատիւը պէտք է լինի ծառայել մարդկութեան, երբ նա տեսնում է որ այս վերջինը կարօտ է օգնութեան։ Եւ ահա հասկանալի չունցաւ որ է միայն մարդկութեան և իւր իրմէն առաջ այն մարդը, որը պիտի է իւր պատասխանատուութիւնը, բայց անձնական նեղութիւն չը սիրելու համար, գանազան անբնական պատճառներ բերելով, միչտ խոյս է տալիս իւր պատասխանատուութիւնների բերէրձութեամբ գործադրելուց։ Ձեր հայ աշխարհս երեսին մի այնպիսի ճշմարիտ վայելչութիւն, երբ մարդ աղնիւ մարդու նման հարատեւօրէն կատարած է լինում իւր պարտքը։

Մի ժամանակ, երբ Ցունաստանը այժմեան Հայաստանից չատ չէր նախանձելի դրութեան մէջ գտնուում, այն ժամանակվայ յոյն երիտասարդութիւնը ինքնայօժարութեամբ հըրաժարուելով կեանքի ամեն տեսակ վայելչութիւններից, նա ամբողջովին նուիրուած էր իւր ժողովրդի ազատութեան գործին։ Մի պատանի բոլոր գոնուելով հայրենիքից հեռու, կարդում է լրագիրների մէջ, թէ իւր հայրենակիցները յեղափոխութեան միջոցների են գիմել Իւրեանց հայրենիքի պատիւը պահպանելու համար։ Այս լուրը հայրենիքի սերովը վառուած երիտասարդի վրայ այն տեսակ մոգական ազդեցութիւն է գործում, որ նա վճռում է անպատճառ գնալ Բոլգարիա պատերազմի դաշտումը մանակից լինելու իւր եղբայրների սուրը գործին։ բայց, երբոր զանազան պատճառներով պատանուն արգելում են Բոլգարիա գնալու, նա առնչով նոստալժիայից յափշտակուած աշխարհն է փոխադրվում

Հայե՛ր, բայց մի՞թէ մեր հայրենիքի վիճակը դեռ այնքան թշուառ և կատարեալ ողբերգական չի, որ մեր սրտերը չեն ատանվում Հայաստանի այն զարհուրելի տեսարանի առաջ, որը ընդունակ կը լիներ մինչև անգամ լեռասրտիկական խոր քնով ընկղմուած մարդկանց ցընցելու, իսկ մենք դեռ չարունակում ենք անտարբեր մնալ։

ՏԻՐ,

Ծանր ուրախությամբ լսեցինք Ձեր հիշատակարանը։ Ձեր տասնամյա գործունեության վերջին տարին, ինչպես Ձեզ հայտնի է, ինձ համար ամենադժվարն էր։ Ես ստիպված էի ոչ միայն ինքս ամեն ինչ անել, այլև ուրիշներին ոգևորել, որ նրանք էլ ավելի ջերմեռանդությամբ աշխատեն։ Ես ուրախ եմ, որ ինձ հաջողվեց ամեն ինչ անել, ինչ որ կարող էի, և ես ինձ մեղավոր չեմ զգում

հավատա Մակար Սրբազան իր պատասխանագրի մէջ տեղեկութիւնները ուղած է նաև թէ Մանիտալեան Մըկըրտիչ եպիսկոպոս որ այժմ Հընդկաստանի Կալկաթա քաղաքը կը գտնուի իբր նուիրակ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, ի՛նչ նպատակով և ի՛նչ պաշտօնով գնացած է այնտեղ։

Յայտնի է որ Հնդկաստանը էջմիածնի Մայր Աթոռին թեմին է և ոչ թէ Կիլիկիոյ և հետևապէս Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէն եւ կամ մի անձ Հնդկաստանի մէջ ոչ է պաշտօնական հանգամանք կրելու համար, Էջմիածնի Վեհ· Կաթողիկոսի հաճութիւնն նախապէս ստանալ հարկ կը լինի։

ՄԱՀԱԴՈՑԻ

Ցաւ ի սիրտ կիմանանք որ Տօքթէօր Գ. Թիւրապեանի մայրը Տիկին Աննա Թիւրապեան չվնասով տասուիլ մի չարաթէ ի վեր ունեցած հիւանդութենէն, մարտ 4/16 ի դիշերըն մեռեր է 70 տարեկան հասակին մէջ։

Հանգուցեալը օրինակ հանդիսացած էր բարի մնչդութեան։

Մխիթարութիւն կը մաղթենք իր մերձաւորներին։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Կոմունէին Շաբաթօր մեռեր է մարտ 25 ի առաւօտ Կօրիձի մէջ։ Մօտէնի գաբնին անգրանիկ տղոյնին էր նա և տասնեւցած էր Շաբաթօրի Կոմնին հետ որուն մի քանի միլիոն օժիտ բերած էր։ Կոմնուհի Շաբաթօրի Թողած հարստութիւնը 12 կամ 14 միլիոնի կը հասնի որի մեծ մասը կերթայ Ցօն Բարլօնին։ Իսկ Շաբաթօրի դղեակը Ֆրանսական պետութեան կտակած էր Շաբաթօր Կոմը իր մեռնելու ժամանակ։

—Պ. Կրանէ, Թղթատարական և հեռագրական նախարարն, մնտերս պիտի երթայ Պրիւսէլ, այդ քաղաքի և Փարիզի մէջ հեռախօսական (Թէլէֆօնիք) մի դիծ հաստատելու համար։

—Հավըի մէջ 2000 ի չափ բանւորներ մի դումարում արած են վարտավիլայ Գ. Կօտօի նախագահութեամբ։ Որոշեր են մի մանաժոդով կազմել, պաշտօն տալով նմա որ չանքեր անէ քաղաքապետութեան չինել տալու մի տպատան անդործ բանւորներին համար և իրենց գործ ճարելու։

—Շաբաթի տուրքին համար կազմուած Խորհրդարանական յանձնաժողովը մարտ 25 ի նիստին մէջ որոշեր է 7 ֆր· վերապիը տուրք դնել օտար գաղթականութիւնների չաքարանոցին վրայ։

—Պ. ոը Լէսեփս, իր ճանապարհորդած բոլոր քաղաքներուն մէջ մեծ ընդունելութիւն և պատիւներ կը դտնէ։ Թէ՛ ժողովուրդները, թէ՛ քաղաքապետութիւնները և թէ՛ առևտրական մեծեմաները մեծ ոգևորութեամբ կընդունին իրեն։ Սէյն–Նաղերի և Նանտի մէջ պաշտօնապէս ճաշկերոյթներ արուած են իրեն։

—Ներքին գործերի նախարարը մի շրջաբերականով պատուիրած է նահանգապետներին որ յորդորեն ժողովրդին չգաղթել հեռաւոր երկիրները։ Մէքսիկա, Դոմինիկեան Հանրապետութիւն, Վէնէսուէլա, Պրէզիլիա և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ–Նահանգներն։ Շրջաբերականը կըսէ թէ այդ տեղերի Ֆրանսայի գաղթականութիւնները անյաջող վիճակի մէջ կը գտնուին այժմ, Ներքին գործերի նախարարութեան հաստատ տեղեկութիւններին համեմատ։

ՏԵՂԱԿԱՆ

«Թրանսատլանթիք» Շոգենաւային ընկերութիւնը Նաբօլիէն մինչև Նիւ–Եորք ուղղակի իր շոգենաւերով երթալու մի գէթ հաստատած է գաղթականներին համար։ Ընկերութիւնը իր շոգենաւով կը բերէ գաղթականները Նաբօլիէն Մարսէյլ և այտեղէ ալ ընկերութիւնը իրեն սեփականութիւնն եղող մանաւոր վաճոնով ուղղակի կը տանի Հավրը ուրկէ ընկերութեան շոգենաւները կը տանին գաղթականներին Նիւ–Եորք։ Այդ վաճոնների մէջ գաղթականներին ամեն կերպ դիւրութիւններ կը տրուին, աժան գնով ուտելիքներ կը ծախուին, մինչև իսկ օրորոցներ կան յատկապէս կամենկեր երեխաներով գնացողներին համար։

Այս կերպով առաջին գնացքը սկսաւ հինգշաբթի երեկոյ։ «Թրանսատլանթիք» ընկերութիւնը Մարսէյլէն Հավը տարաւ Նաբօլիէն եկած 225 գաղթականներ։

—Զորեքշաբթի օր Ալժէրիէն 3 ղօրք և 1 արապ եկան որպէս կատարի չունեցէ խաժուժած լինելով բժշկուելու համար դնացին Փարիզ Գ. Բասթէօրի մօտ։ Ռուսիայէն, Ամերիկայէն, աշխարհիս ամեն կողմերէն այդ հիւանդութեան զոհեր կը վազեն կուգան Փարիզ օգուտ քաղելու համար Գ. Բասթէօրի նոր գիւտէն։

—Մարսէյլի Օսմանեան պատուական վոխ–հիւպատոս անուանուած է Գ. Բօլ Բահպէր։

—Ռուսական զօրավար Հայադէի Կոմս Լօրիս Մէլիքոֆի երկրորդ ապջիկը նշանուեր է Նիսի մէջ Գ. Նովիքովի, Կ. Գօլսի ռուսական նախկին դեսպանի որդուն հետ։ Ամուսնութիւնը պիտի կատարուի քիչ ժամանակէ յետոյ և Գ. և Տիկին Նովիքով պիտի երթան իրենց բնակութիւն հաստատել ի Մոսկուա։ Կըլսենք թէ Մարսէյլի հիւպատոսարանին միջոցով տեղեկութիւններ ուզուեր են Նիսէն թէ այտեղ հայ եկեղեցի և հայ քահանայ կա՞յ և թէ ի հարկին հայ քահանայն ալ կրնա՞յ ներկայ գտնուիլ ի Նիս ամուսնութեան հանդիսին։ Բնականապէս տրուած պատասխանը հաստատական եղած է։

—Քաղաքապետական ժողովը Լեկկի նիստին մէջ երկար և սաստիկ վիճաբանութենէ յետոյ որոշեց Բադասակարդի, այսինքն պահապան շուներուն տուրքը 1 ֆր. 50 սանթիմ, իսկ Ա. կարգի այսինքն զարդարանքի շուներուն տուրքը 10 ֆր. անել։

—«Ճէնուահ» շոգենաւին մէջ որ հինգշաբթի երեկոյ հասաւ Մարսէյլ, մեռեր է Գ. Շէրդէր, Ֆրանսան հիւպատոս ի Մադաս։ Շոգենաւին մէջ քահանայներ ալ գտնուելով մի մատուռ պատրաստեր են և կրօնական արարողութիւնները կատարելէ յետոյ, մի գագաղի մէջ դրեր են և ոչ թէ ըստ սովորականին պարկի մէջ, և նետեր են ծովը։ Դագաղին մէջ 200 քիլօի չափ մեռած դրած են որպէս զի անմիջապէս լճնէ ջրին յատակը։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Կըսուի թէ Իտալական կառավարութիւնը մի նոր բանաձև առաջարկած է համաձայնեցուելու համար, եթէ կարելի է, Ալեքսանդր իշխանի պահանջները մեծ պետութիւնների ուրած որոշումներին հետ։ Դեռ յայտնի չէ թէ Ալեքսանդր իշխանը պիտի համաձայնի այդ բանաձևի։

—Վառնային կը հեռագրեն թէ Գուլկար կառավարութիւնը պատրաստութիւն է խիստ միջոցներ ձեռք առնել Ռուսիոյ կուսակից ազգայդներին դէմ։ Զանքօֆի կուսակցութեան ամենաազդեցիկ անդամներէն տաներէքը ձերբակալուած և մի քանի լրագիրներ խափանուած են։ Հեռագիրը կը յաւելու թէ նոյն իսկ ինքը Գ. Զանքօֆ ռուսական հիւպատոսի պաշտպանութեամբը հազիւ ազատուեցաւ ձերբակալուելէ։

—Սուլթանը մնտերս մի «Իրատէ» պիտի հրատարակէ որով կը հրամայէ 230,000 օսմ. ոսկու բռնի փոխառութիւն անել։ Այդ «իրատէ»ի համեմատ բոլոր պաշտօնատարները իրենց ամսականներէ մէկ մէկ ամսական պիտի թողուն։

—Պէրլինի դիւանագիտական շրջաններուն մէջ կը հաւատան որ Բ. Դրան և մեծ պետութիւններուն մէջ սկսուած բանակցութիւնները Գուլկարիայի իշխանին նպատակ ունին մի եղբայացութեան պիտի յանգին և Ալեքսանդր իշխանը հաւանօրէն դիկտատորին կառավարիչ պիտի անուանուի Արև. Բումելիի։

—Ալեքսանդր իշխանը Արև. Բումելիի հնգամեայ իշխանավարութեան պայմանը մերժելն կապտան էֆէնտիին լսացուցած ժամանակ, հաստատեցեր է նաև որ եթէ իրեն պահանջները գոհացում չտրուի, Թիւրքիայի հետ եղած միւս բոլոր պայմանագրութիւններէն ազատ պիտի համարի իրեն։

—Աթէնքէն կը հեռագրեն մարտ 25 ին թէ Յունաստանի կառավարութիւնը խառնակութեան նոր երեւոյթներ նկատելով Թիւրքօ–պուլկար համաձայնութեան խնդրին մէջ, մտադիր է դէնքի հրաւիրել պահեստի զօրքերին։

—Վիէննայէն կը հեռագրեն թէ Ռուսիան մերժեր է Իտալիոյ առաջարկը որի համեմատ Բումելիի կառավարութիւնը միշտ պիտի յանձնուէր Գուլկարիոյ իշխանին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Գահիրէէն կիմացուննն մարտ 24ին Տէյլի–Քրօնիքլ լրագրին թէ ազատամարտների մի հզօր բանակ կազմակերպուած է Պէրպէրիոյ մօտ և կը պատրաստուի անմիջապէս առաջ քալել Սբը Տրըմմընա Վօլֆ մի հեռագիր ընդունեց որ կը հրամայէ իրեն անմիջապէս մի դաշնագրութիւն անել Մուխթար փաշայի հետ։

—Սուլթանը Ա. կարգի մեճիտիյէ պատուանշան տուած է պուլկարական պատուիրակ Գ. Զանօֆին։

—Թիւրք կառավարութիւնը արգիլեր է իտալերէն Diritto լրագրի մուտքըն ի Թիւրքիա։

—Պրիւսէլէն (Պէլճիդ) կը հեռագրեն մարտ 24 ին թէ Լիէժի մէջ գործադուլը հետզհետէ կընդհանրանայ։ 2000 անդործ բանւորներ կը գըտնուին Լիէժի դուռները Անիչխանականները կը ջանան օգուտ քաղել այս վիճակէ։ «Ժողովրդի վարդապետարանը» անուն մի տեղական ըրուած են ամեն կողմ Աղմկայոյզ բանւորներուն և հետաքրքիրների մէջէն վիրաւորուածներուն և ձերբակալուածներուն թիւը շատ է։ Վիրաւորուածներէն երկու երիտասարդներ մեռեր են։ Լուր կայ թէ Belmanական կառավարութիւնը առաջարկեր է Պրիւսէլի կառավարութեան որ միջազգային միջոցներ ձեռք առնուին ընկերվարականներին դէմ։

—Իտալիոյ գործաւորական ընկերութիւնները հանգանակութեամբ նպաստ կը ղրկեն Տը քազվիլի գործադուլ անող բանւորներին, իրենց համակրութիւն և միջազգային համերաշխութիւնը յոյց տալու համար։

—Գիտաբ իշխանը բժիշկներէ խորհրդին համեմատ պիտի երթայ մի ժամանակ բնակի Թրիէստէ չըլլայ։ Աւստրիոյ կայսրը նորա տրամադրութեան տակ դրեր է Միրամարի պալատը ուր բնակած էր երբեմն Մաքսիմիլեան Կայսրը։

—Ալմանական կառավարութիւնը առաջարկեր է Զուիցերիոյ դաշնակցական խորհուրդին որ միջազգային որոշումները գործադրուին ընկերվարականներին դէմ։

—Լոնտոնէն կիմացուննն թէ Գ. Կլատսթընի Իրլանտական խնդրին վերաբերեալ իր ծրագիրը ապրիլ 6 էն յառաջ չպիտի կրնայ ներկայացուննլ։ Գ. Գ. Զամպերլէյն և Թրիվելյան դեռ չեն համաձայնուած Գ. Կլատսթընի հետ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Ա Զ Դ

«Ազմէնիա»ի բաժնորդ գրուիլ ցանկացողներին դիւրութեան համար, ուղղեցինք նոր բաժնորդագրութիւններն ընդունիլ իւրաքանչիւր ամսի մէկէն սկսելով։ Նախորդ թիւերն կը ղրկուին անոնց միայն որք յատկապէս փափաք կը յայտնեն։

Ա Զ Դ

Խմբագրատունը փոխադրուած լինելով Vacon փողոց թ. 50, կը խնդրուի ղրկել նամակներն այսուհետև Rue Arménie, 2, այլ պարզապէս հետևեալ հասցէով.

M. PORTOUKALIAN, Rédacteur du journal «Arménia». MARSEILLE (FRANCE).

ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՔՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՐՆԱԿ ԳԱԻԱՌՍ ՍՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԲ ՍԱՐԼԻՆ ԵՒ ՁՈՐԼԻՆ ՀՆԻՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՊԻՏԱՆԻ ԴԻՏՆՈՑ

==

Մաս Ա. Բ. Գ. (առարտ)

Հայարնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, չէն և ամայի վանօրէից նկարագիրն, աւանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Ազգ. գործ մի է, ամե-

նակարևոր և հետաքրքրական գրուած չրջահայեաց և շատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յաճախակի վերծանութեան։

Կը գտնուի բոլոր դրավաճառաց քովկեդրոնատեղին է Պօլիս Պահէ-գափու հացագործի փառան դէմ Գ. էֆ. Ձոնեանի վաճառատուն, թիւ 11։

Գին — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ » 20 »

Զը ծախուին Պարսկիլ, «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը։

Օտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, երէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրքական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Ազմէնիա»ի խմբագրութեան։

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ինչպէս արդէն յայտարարած էինք, Տփղիսի «Մշակ» լրագիրը սկսած է հրատարակուիլ նոր տարու սկիզբէն, խմբագրապետութեամբ Մեծ. Պ. Գրիգոր Ալթրունեան։

«Մշակ»ը այս տարի կը հրատարակուի շաբաթն երիք անգամ և տարեկան բաժնորդագինն է, ամեն տեղի համար, ռուսական թղթադրամ 10 րուբլի և կամ ֆրանսական 25 ֆրանկնոց թղթադրամ որ կարելի է ապահովագրուած նամակով ղրկել

խմբագրութեան հետևեալ հասցէով.

Rédaction du journal arménien «Mschak». Tiflis (Caucase-Russie).

Պ. Գ. Ալթրունեան թէ՛ խմբագրական հմտութիւնը և թէ՛ հայրենասիրական եռանդը հանրածանօթ լինելով, աւելորդ կը համարինք խօսիլ այդ նկատմամբ և կը յուսանք որ շատեր պիտի փութան բաժնորդ գրուիլ մի այդպիսի կարևոր թերթի, նոյն իսկ իրենց օգտի համար։ «Մշակ»ի վերսկսին հրատարակութիւն մի այնպիսի ուրախութիւն եղեւ ազգի պատճառած է Ռուսաստանի մէջ որ զանազան քաղաքներէ փութացած են հեռագիրներով յայտնել իրենց չնորհաւորութիւնները «Մշակ»ի խմբագրութեան։

JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articles pour Photographes, peintres et ingénieurs.

Cartes Géographiques et maritimes' Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissoins de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

Grand assortiment de Musique des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi' Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc.,etc.

On se charge de toutes sortes de Commissions.

Un succès de la France à l'Etranger.

Si les Français à l'etranger soutenaient les produits de la mère patrie avec autant d'enthousiasme que le signataire de cette lettre pour un produit etranger à son pays, la concurrence étrangère ne serait plus à redouter. »Colchester (Angl.) Je viens de recevoir une lettre d'un M. M. de Saint-Aubin (Gironde), qui me fait l'honneur de me demander si je reconnais avoir été soulagé, par vos Pilules Suisses, des maux d'estomac dont je souffrais. Je viens de lui repondre pour lui certifier que tout ce que ma lettre publiait était la verite pure, et que vos Pilules Suisses étaient, sans contredit, les meilleures pilules du monde. Celà est si vrai, que je vous prie de m'en envoyer encore trois boites à 1 fr. 50 la boite. Je les recommande à toutes mes connaissances, et tous ceux qui en prennent en sont satisfaits ;- surtout un monsieur qui, toutes les fois qu'il me rencontre, ne cesse d'en faire des éloges. Je vous autorise à publier ma lettre et je répondrai toujours avec plaisir aux personnes qui m'écriront. «A. Saint-Aubin, 33, Saint-John'sStreet.»
A. Hertzog, Phien, 28, rue de Grammont, Paris.

INSECTICIDE BOUVAREL

TORD-BOYAUX
Destruction infaillible des Rats, Mulots, etc.
75 CENT. *la boite.*
d. t. l. pharmies et marchds de coulrs
PIOT FRÈRES, Successeurs de GUERARD et Cie, 28, Rue Ste Croix-de-la-Bretonnerie, Paris

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.

IMPRIMERIE DU MIDI

TYPOGRAPHIE

M. SCHICKLER

LITHOGRAPHIE

Rue Vacon, 50. - Marseille

Prix-Courants
Factures
Circulaires Commerciales
Entêtes de Lettres
Enveloppes

Spécialité pour Brochures, Catalogues et Mémoires

OUVRAGES DE LUXE

JOURNAUX DE TOUS FORMATS

Cartes de Visite
et d'Adresse
Lettres de Mariage
et de Naissance
Mandats

LETTRES DE DÉCÈS EN 1 HEURE

Affiches en noir et en couleurs, Prospectus

AVIS. — *La Maison se recommande par la Netteté de son Travail et par la prompte exécution des Commandes*